

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2022 թվականի
հուլիսի 1-ի կայացած գիտիտրիդի նիստի

Օրակարգում՝

1. 2021-22 ուստարվա առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի ավարտական կուրսերի ատեստավորման մասին:
2. 2021-22 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:
3. Դոցենտի գիտական կոչում ստանալու գործընթացին մասնակցելու երաշխավորության հարցը:
4. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ՈԻԳԸ նախագահի հաշվետվությունը 2021-22 ուստարվա ընթացքում կատարած աշխատանքների մասին:
5. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ՈԻԽ նախագահի հաշվետվությունը 2021-22 ուստարվա ընթացքում կատարած աշխատանքների մասին:
6. Հաշմանդամություն ունեցող ուսանողների համար համալսարանում առկա խնդիրների մասին / փիլ. 2-րդ կուրսի ուսանող՝ Վահան Դիշլանյան/:
7. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին 2021-22 ուստարվա առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի ավարտական կուրսերի ատեստավորման վերաբերյալ հարցը:
Ա. Բաղդասարյանը ներկայացրեց ֆակուլտետում աշխատանքների հետ կապված առկա խնդիրները: Քննարկվեցին նախապաշտպանությունների հետ կապված ատեստավորման հարցը, գրախոսությունները, դեկավարների կողմից ներկայցված կարծիքները ավարտական և մագիստրոսական աշխատանքների վերաբերյալ: Առաջարկվեց ժամանակին հաստատել աշխատանքի թեմաները, փոփոխության անհրաժեշտության դեպքում, վերնագրերը քննարկել և վերահաստատել

Ֆակուլտետի գիտխորհուրդի կողմից: Որոշ ուսանողների աշխատանքներում հայտնաբերվել են արտագրություններ, որը ըստ գրախոսի համարվել է գրագողություն: Հարցի շուրջ արտահայտվեցին. Ն.Խաչատրյանը, Գ.Պետրոսյանը, Ս.Խաչիբաբյանը, Հ.Ավանեսյանը: Առաջարկվեց հետևել կանոնակարգին, ժամանակին ներկայացվեն թեմաները, կատարված աշխատանքները, անհամապատասխանության դեպքում չստորագրել այն:

Հ. Հոսիանյանը նշեց, որ նման պատկերը պայմանավորված է նրանով, որ ուսանողը այլևս չի գրում կուրսային աշխատանքներ / որը ևս ունի թերի կողմեր /, որը կնախապատրաստեր լիարժեք ներկայացնել ավարտական աշխատանքներ:

Ֆակուլտետի փոխդեկան՝ Ն.Ալավերդյանը նշեց, որ մշակվում է նոր կանոնակարգ աշխատանքների վերաբերյալ, որտեղ հստակ ներկայացված կլինեն ավարտական և մագիստրոսական աշխատանքների կատարման վերաբերյալ պահանջները, ժամկետները և չափորոշիչները:

2. Ինչ վերաբերում է 2021-22 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքներին, ապա Ա. Բաղդասարյանը իր ելույթում նշեց, Ֆակուլտետի ուսանողների 1/3 մասը ունի անբավարար առաջադիմություն: Այնուհետ նշեց, որ ոչ միայն 1-ին կուրսեցիներին, այլ ավագ կուրսերին էլ անհրաժեշտ է իրազեկել գնահատման նոր կարգը:
3. Լսեցին դոցենտի գիտական կոչում ստանալու գործընթացին մասնակցելու երաշխավորության հարցը, որին դիմել էին Լ.Բաբաջանյանը և Ն.Ալավերդյանը: Նիստի անդամները միաձայն երաշխավորեցին հետագա գործընթացները:
4. 2021-22 ուստարվա ընթացքում կատարած աշխատանքների մասին հաշվետվությամբ ելույթ ունեցավ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ՈԻԳԸ նախագահ՝ Ա.Ամիրջանյանը: Կից ներկայացված են նյութերը:
5. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի հաշվետվությունը 2021-22 ուստարվա ընթացքում կատարած աշխատանքների մասին

հաշվետվությամբ ելույթ ունեցավ ՈԻԽ նախագահ՝ Մյասնիկ Սախակյանը:

Կից ներկայացված են նյութերը:

6. Հաշմանդամություն ունեցող ուսանողների համար համալսարանում առկա խնդիրները ներկայացրեց փիլ. 2-րդ կուրսի ուսանող՝ Վահան Դիշլանյան:

Նա ելույթ ունեցավ հետևյալ առաջարկություններով: Կից ներկայացված են նյութերը:

7. Քննարկվեցին ասպիրանտների թեմաները և հաստատվեցին ղեկավարներ.

Սիմոնյան Համլետ. ղեկավար՝ Է. Հարությունյան

Տոնոյան Զավեն. ղեկավար՝ Ս. Զաքարյան

Ա. Բաղդասարյանի կողմից առաջարկվեց նաև վերանայել մեթոդական խորհրդի կազմը: Քանի որ ամբիոնի վարիչները ունեն մեծ ծանրաբեռնվածություն, խորհրդում ներգրավել ամբիոնի այլ դասախոսներին;

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

 Նիստի քարտուղար՝ Վ. Պապոյան

Առաջարկներ

1. Դասախոսների իրազեկումը հաշմանդամություն ունեցող ուսանողի առկայության և նրան մատչելի կրթության ապահովման վերաբերյալ: Ուսանողի ընդունվելուն պես ֆակուլտետի դասախոսները պետք է տեղեկացվեն այդ մասին: Նախքան ուսումնական տարվա մեկնարկը պետք է քննարկում տեղի ունենա ուսանողի և դասախոսների միջև՝ ուսանողի անհատական կարիքների բացահայտման և ըստ այդ կարիքների՝ մատչելի կրթության ապահովման վերաբերյալ: Կազմակերպել ուսանողի և օգնականի հանդիպում նախքան դասապրոցեսի սկիզբը:
2. Մատչելի գրականության բացակայությունը: Կազմակերպել գրականության ձայնագրում կամավոր ուսանողների ջանքերով, որոնց դիմաց նրանք կարող են ունենալ որոշակի խրախուսումներ: Այդ պարագայում համալսարանը կունենա ձայնագրված գրականության մեծ քաղաք, որը կօգտագործվի ապագայում ընդունված ուսանողների կողմից ևս:
3. Խնդրել դասախոսներին տրամադրել նյութերը Microsoft Word կամ ուսանողի հետ քննարկման արդյունքում նրան մատչելի և դասախոսին ևս հարմար տարբերակով:
4. Դասախոսների կողմից հաշմանդամություն ունեցող ուսանողի կողմից դասերը ձայնագրելուն չխոչընդոտելը. Համաձայն Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՀՀ օրենքի (ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԸ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՈՒՄԸ) 4րդ գլխի 14րդ Հոդվածի 6-րդ կետի՝ “Կրթության մատչելիությունը խթանող միջոցառումները միտված են անձի մտավոր կարողությունները, անհատականությունը, տաղանդը և ստեղծագործական միտքը զարգացնելուն, այդ թվում՝ բոլոր ուսումնական և կրթական հաստատություններում ներառական կրթական ծրագրերի ու անհրաժեշտ տեղեկատվության հասանելիությունն ու մատչելիությունը ապահովելու միջոցով»: Այս պարագայում ուսանողի կողմից դասերի ձայնագրումը հանդիսանում է նրա համար մատչելի ձևաչափով նյութ ունենալու միջոց:

5. Համալսարանի էլեկտրոնային հարթակներից օկտվելու մանրամասն ուսուցանում: Որևէ մասնագետի ուղղորդմամբ կայքերի ծանոթացում, կայքերում տեղաշարժվելու և գործողություններ կատարելու ուսուցանում, քանի որ տեսողության խնդիրներ ունեցող ուսանողները հնարավոր է այլ միջոցներով՝ օրինակ ձայնային ծրագրերով օգտվեն վեր բովանդակությունից, անհրաժեշտություն է ծագում այդ կայքերում տեղաշարժվելու, դրանցում գործողություններ կատարելու հանգամանալից ուսուցում:
6. Այլ վայրերում կամ մասնաշենքերում իրականացվող դասընթացներին մասնակցությունը: Երբ դասընթացը չի անց կացվում այն մասնաշենքում, որտեղ սովորում է հաշմանդամություն ունեցող ուսանողը, այդ պարագայում ապահովել ուսանողի հասնելը դասընթացի իրականացման վայր և կամ կազմակերպել դասընթացը այն մասնաշենքում, որտեղ տեղակայված է ուսանողի ֆակուլտետը:
7. տեղեկատվական տեխնոլոգյա դասընթացինչմասնակցելը: Առաջարկում ենք Դասն անց կացնել համապատասխան մասնագետի ներգրավմամբ, ով տիրապետում է այն աջակցող ծրագրերին, որը գործածում է տեսողության խնդիր ունեցող ուսանողը:
8. Անհատական օգնականների գործառույթների հստակեցումը: Ռեկտորի համապատասխան որոշման մեջ նշված է, որ անհատական օգնականը աջակցում է դասապատրաստմանը: Հստակեցնել՝ ո՞ր մասով է աջակցում դասապատրաստմանը, ի՞նչ առարկայացանկի շրջանակներում, արդյո՞ք ոչ մասնագիտական առարկաները մտնում են դրա մեջ, արդյո՞ք նա պետք է աջակցի հոդվածների, կուրսայինների, ռեֆերատների, դիպլոմայինների պատրաստման հարցերում: Ուսանողը պետք է հստակ տեղեկացվի, թե ինչպիսի աջակցություն է տրամադրվելու իրեն: Համապատասխան որոշման մեջ նշված է ուղեկցելու աջակցությունը:
9. մինչ շենքի մուտք և շենքի ներսում մատչելիության բաղադրիչների և խելամիտ հարմարեցումների բացակայությունը: Բացի թեքահարթակներից գոյություն ունեն ուղղորդող և նախազգուշացնող տակտիլ (շոշափելի) սալիկներ, որոնցով չտեսնող ուսանողը կողմնորոշվում է տարածության մեջ: Դրանք անձին ուղղորդում են դեպի մուտքեր: Բրայլի համակարգով դռների վրա նշումներն օգնում են անձին

կողմնորոշվել լսարանների, ամբիոնների համարները և անվանումները կարդալիս:

10. Դասախոսների վերապատրաստում հաշմանդամություն ունեցող անձանց կրթական կարիքների, մատչելի կրթության ապահովման, նրանց կողմից ընդունելի տերմինների, էթիկայի շուրջ: Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիան, որը հաշմանդամության հիմնահարցերով զբաղվող 14 կազմակերպություններից և 4 անհատներից բաղկացած կոալիցիա է, պատրաստակամություն է հայտնել «Դեպի ներառական Հայաստան» ծրագրի շրջանակներում աջակցելու վերապատրաստումների և հաշմանդամության տարբեր տեսակներ ունեցող ուսանողներին մատչելի կրթության ապահովման խորհրդատվության հարցում: Նրանց կարող եք դիմել coalition.cilr@gmail.com էլեկտրոնային հասցեով:

ՓԻԼՍՈՓԱՅԻՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒԳԸ



«Ամառային դպրոց»
25.08-30.08.2021



«Մատյան ողբերգությանը» որպես հոգեթերապիա
22.09.2021



«Բանավեճի ճարտասանության հմտությունները»
12.10.2021



«ՈւԳԸ միջազգային գիտաժողով»
05.10.2021



«8-րդ միջազգային գիտաժողով»
16.10-18.10.2021



«Ի՞նչ է ՈւԳԸ-ն»
23.11.2021



«Հոգեբանական ակումբ»
04.12.2021



«Աշխարհի գիտական պատկերի փոփոխություն»
08.12.2021




**«Աշխարհի գիտական պատկերի
փոփոխություն»**

ԵՊՀ ասպիրանտ՝ Դավիթ Աբելյան

08.12.21
Ժամը՝ 14:30

«Ինչպե՞ս գրել գիտական աշխատանք»
10.12.2021



«Հոգեբանական ակումբ»
11.12.2021



«Հոգեբանական թեստերի օր»
27.04.2022

